ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 23 2020 № 2

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ

Կեսգիշերին մոտ համացանցից առա մահվանդ լուրը...

Այնքան հանկարծակի էր՝ շունչս մի պահ կտրվեց: Կրծքումս բութ ցավ զգացի: Իմացել էի՝ տարիները ծերացրել են քեզ, տկար ես, բայց ոտքի վրա ես, ցերեկները տան դիմացի այգում ես լինում: Չէի ուզում կիսատ-պռատ տեսքովս դեմդ կանգնել: Մտածում էի՝ հենց հենակս զցեմ, անպայման գալու եմ: Չհասցրի: Գնալուցդ առաջ ինձ էլ երևի մտաբերած կլինես, երևի նաև՝ նեղսրտած՝ «Էդ տղեն ի՞նչ եղավ, չեկավ…»: Չհասցրի ու հիմա դառնորեն զղջում եմ… ների՛ր….

Մի քանի օրվա ասպիրանտ էի, մայրաքաղաքում դեռ մի երկու տեղ գիտեի՝ Լեզվի ինստիտուտ, Հանրային գրադարան, ու մի քանիսին՝ Աբովյանի ու Իսահակյանի արձանները, ղեկավարիս ու նրա տարիքն առած գործավարուհուն: Առավոտ վաղ գրադարանում էի մինչև փակվելը: Ինչքան հիշում եմ՝ երրորդ օրն էր, առաջին ընթերցասրահի աշխատակցուհիները, որոնք արդեն գիտեին իմ լենինականցի լինելը և գուցե այդ պատճառով շատ հոգատար ու բարեհաճ էին իմ նկատմամբ, խնդրեցին շուտ դուրս չգալ, քանի որ ինձ տեսնել է ուզել իրենց ընթերցողներից մեկը, որ իմ «զեմլյակն» է: Ու որովհետև նրա մասին ընդգծված ակնածանքով արտահայտվեցին, հետաքրքրությունս կրկնապատկվեց: Ընթերցասրահը կամաց–կամաց դատարկվեց, մնացի ես նրա հետնամասում՝ գրքերով լի իմ սեղանի հետևում, բայց կարդալ չէր ստացվում:

Արդեն մութ էր, երբ ընթերցասրահի դուռը բացվեց, ու ներս մտար դու: «Էրեխե՛ք, չսպասե՞ց, գնաց, հա՛. երեկոյանում դաս ունեի, ուշացա»,- մի տեսակ արդարանալով՝ ասացիր ու «երեխեք»-ի ուղղորդող հայացքների հետ դեմքդ շրջեցիր իմ կողմը: Ծանոթացանք, դուրս եկանք, զրուցելով քայլեցինք գիշերային Երևանով, հասանք Մերգելյան ինստիտուտ, մտանք քո օջախը, ինձ ներկայացրիր անմոռանալի տիկնոջդ՝ երջանկահիշատակ Սոնային ու Արմեն որդուդ, հետո տիկին Սոնան հացի սեղան բացեց, հետո ամուսիններով խնդրեցիք՝ գիշերեմ ձեր հյուրընկալ հարկի տակ: Երկար զրուցեցինք ամեն ինչից՝ հայերենից, գրականությունից, մեր գիտական նախասիրություններից, քաղաքից, մեր ծնողներից ու հարազատներից, իմ նորաստեղծ ընտանիքից: Հանկարծ պարզեցինք, որ մեր հայրերը մտերիմ ընկերներ են եղել, որ մենք նույն բուհն ենք ավարտել՝ Լենինականի մանկավարժականը, որ, որ…. Ու ես զլուխս բարձին դրեցի՝ համոզված, որ հանդիպել եմ անզուգական մարդկանց: Չսխալվեցի: Դու Խաչիկ Բադիկյանն էիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու, Երևանի համալսարանի հա-

յոց լեզվի ամբիոնի դոցենտ, հեղինակավոր լեզվաբան ու հիանալի դասախոս, ես՝ ընդամենը նորաթուխ ասպիրանտ՝ բուհական ցանցառ գիտելիքներով (Ես գրաբար համարյա չգիտեի, բայց ուզում էի անպայման գրաբարագետ դառնալ):

Ես քո հյուրընկալ հարկի տակ գիտության ու մշակույթի շատ երևելիների հետ ծանոթացա, շատերին մտերմացա, շատ բան սովորեցի ու հիմա էլ, երբ ինքս եմ օգնում երիտասարդներին՝ գտնելու իրենց երազանքը, դա անում եմ այնքան պատրաստակամ ու աննկատ, բայց սրտանց, ինչպես դու էիր վարվում ինձ հետ: Միջնորդեցիր, որ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի սաների հետ գրաբար սովորեմ, պահանջում էիր գլուխներով սերտել Խորենացի, Եղիշե, Կողբացի, Աստվածաշունչը, սովորեցրիր աշխատել բնագրի վրա: Հիշում եմ՝ ինչքան էիր ուրախացել, երբ գրաբարից թեկնածուականս էի պաշտպանել: Սովորեցրիր օպերա հաճախել, Դրամատիկի ու Ակադեմիականի ներկայացումներին լինել, դասական երաժշտություն լսել, կյանքի մեծ ու փոքր հարվածներին դիմանալ. ինչքա՜ն, ինչքա՜ն բան իմացա ու սովորեցի քեզանից: Երևանյան տարիներիս մտերմացանք նաև ընտանիքներով, փոքրիկներիս համար տիկին Սոնան Սոնա տատիկ էր, դու՝ Խաչիկ պապիկ: Հետագայում ամեն անգամ մենակ կամ մերոնցով Երևան գալս առիթ էր ձեզ հանդիպելու, Գյումրի ձեր գալը իսկական տոն էր մեզ համար: Այսպես քառասուն տարի: Դու դարձար հայ արդի լեզվաբանության նշանավոր դեմքերից մեկը, բանասիրության դոկտոր, վաստակաշատ պրոֆեսոր, գիտական հարուստ ժառանգության տեր, բայց մնացիր համեստ ու անկրկնելի այր, մի բարի, անչափ բարի պապիկ, որ կարող էր ժամերով իմ փոքրիկների հետ «ֆոֆռալ» Կենդանաբանական այգում: Դրսում՝ ուրախ պահերիդ, իսկ տանը միշտ՝ շուրթերիդ մեր բարբառն էր: Մի օր մեր տան մեջ՝ սեղանի վրա ասիր՝ «Ընձի աշեք՝ ինչ կըսեմ. ես ու տիկինս ձեզնեն մենձ ենք, ըսել է թե՝ ձեզնեն շուտ կերթանք: Արդարն էդ է: Դուք էլ որ էգաք, ուրիշներին օսյաթ կենեք՝ մենակ քեզի համար կապրիս՝ երկար կապրիս, նաև ուրիշների համար կապրիս՝ ճիշտ կապրիս»:

Իմ սիրելի՛ ու թա՛նկ ընկեր, էս խառնակ օրերի հորձանուտի մեջ գնալդ չիմացա, ների՛ր ինձ, միակ մխիթարությունս այն է, որ հաստատ գիտեմ՝ շատ էիր կարոտել՝ գնացիր միանալու քո Սոնային. թող ձեր հոգիները հավերժորեն ճախրեն լույսերի մեջ:

բան. գիտ. դոկտոր Մերգո Հայրապետյան